ՆՈՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ՀՆՉԱԿ» ԱՄՍԱԹԵՐԹԸ 1888 -1915 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (Լուսընծայման 120-ամյակի առթիվ)

19-րդ դարավերջի հայ քաղաքական կուսակցությունների մամուլի պատմության մեջ «Հնչակ»-ն ունի իր ուրույն տեղը: Ամսաթերթի հրատարակությունն իրադարձային նշանակություն ունեցավ հայ իրականության մեջ, քանի որ իր հրապարակախոսական նպատակասլացությամբ Արևմտահայաստանի կյանքի վերակառուցման արմատական ու նոր ծրագրերով դեպի իրեն էր քաշում բազմաթիվ ընթերցողների: «Հնչակի» հրատարակիչները՝ ռուսահայ վտարանդի ուսանողներ Ավետիս Նազարբեկյանը, Մարո Վարդանյան-Նազարբեկյանը, Ռուբեն Խանզատյանը, Գաբրիել Կափյանը, Գևորգ Ղարաջյանը և մյուսները Ժնևում տպագրելով ամսաթերթը, նրա անունով էլ ստեղծեցին իրենց կուսակցությունը: «Հնչակի» ղեկավարները նարոդնիկական գաղափարախոսության կողմնակիցներ էին և կրկնում էին ռուս հեղափոխական վտարանդիների գաղափարները: Լինելով մանր բուրժուական հոսանքի ներկայացուցիչ՝ թերթը և կուսակցությունը ներկայանում էին որպես ամբողջ հայ ժողովրդի ներակայացուցիչներ և կարճ ժամանակամիջոցում մեծ հեղինակություն վայելեցին ողջ աշխարհում սփռված հայության շրջանում: Այս առիթով ահա ինչ է գրում «Հնչակի» մասին խորհրդահայ մամուլի պատմաբան Խ. Բարսեղյանը. «Հնչակյան դառնալու համար խաչի ու ավետարանի վրա երդվում էին հայ արհեստավորն ու քահանան, գյուղացին ու ծառայողը, առևտրականն ու ուսանողը, բոլոր նրանք, որվքեր առանց դասակարգային տարբերության պարտավորվում էին նվիրվել «Հայկական հարցի» լուծմանը, «Երկրի փրկությանը»: [1]

Որպես նոր երևույթ «Հնչակ»-ն ուշագրավ է հայ հասարակական մտքի պատմության մեջ և եղած հոսանքների համեմատ մի շարք նորություններով հարստացնում էր հայոց հասարակական միտքը: Ամսաթերթն իր գործունեությունն ուղղել էր Արևմտահայաստանի ազատագրությանը, որն ավելի բուռն ընթացք ստացավ 1890-ական թվականներին: «Կուսակցության օրգան «Հնչակը» իր տեսակի մեջ անզուգական հանդես մը եղավ, որը մանավանդ իր սկզբնական շրջանին մեջ հեղափոխական սերունդ մը դաստիարակեց, ներշնչելով անոր ճշմարիտ ազգասիրության ոգին և արծարծելով վսեմագույն գաղափարներ»: [2]

---

[1] Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում 1967, Եր., էջ 170
[2] Հ. Արամյան, Վերածնունդի երկունքը, Պոլիս, 1918, էջ 34

«Հնչակ»-ի գաղափարներով ոգևորված հայդուկային խմբերը հայտնվում էին տարբեր գավառներում՝ նախապատրաստելու ինքնապաշտպանության բնաջնջման սպառնալիքի տակ գտնվող արևմտահային: Նրանք հայտնվում էին այնտեղ, որտեղ աղետ էր սպասվում՝ Սասուն, Վան, Զեյթուն, Էրզրում, Կիլիկիա... Պատմաբանները տեսակետ են հայտնում, թե թուրք ջարդարարների բռնարարքները մեծապես հետևանք են դաշնակցականների և հնչակյանների գործունեության, բոլորովին սխալ տեսակետ է, որովհետև թուրքերն այդ ջարդերն ու կոտորածները նախօրոք ծրագրավորված են կատարել, իսկ հնչակյաններն ընդամենը ցանկացել են կանխել այդ աղետները: Այս առիթով իր ճիշտ տեսակետն է ներկայացնում պատմաբան Ս. Մարկոսյանը, գրելով. «Ամփոփելով մեր տրամադրության տակ եղած ինչպես տպագիր, այնպես էլ արխիվային փաստաթղթերը, մենք գալիս ենք այն եզրակացության, որ Թուրքիայում կատարված կոտորածների կազմակերպողը թուրքական պետությունն էր, որին ամեն գնով պաշտպանում էին իմպերիալիստական պետությունները»:[3]

Լեոն հնչակյանների տեսական հայացքների մասին ահա ինչ էր գրում. «Հնչակ»-ի էջերում հրապարակախոսությունը սկսել էր իր մայրենի լեզվով թոթովել «սոցիալիզմ», «կապիտալիզմ», համամարդկային տերմինները, ծանոթացել նրանց հետ հայ ընդհանրության դեռ անշարժ տիրացուական միտքը, փորփրել նրա թանձր զանգվածը և մտցնել նրա մեջ կարմիր, հեղաշրջիչ հասկացողություններ շահագործողների և շահագործվողների մասին, խարսխել կյանքի առեղծվածների պարզաբանությունը տնտեսական հիմքերի վրա և այլն և այլն»[4]:

«Հնչակը», ըստ Լեոյի. վերածնունդն էր այն հոսանքի, որ դեռ 1860-ականների սկզբին ներս էր խուժում հայ իրականության մեջ, բայց այդ հոսանքը տվեց միայն Միքայել Նալբանդյան: Այստեղ, սակայն, այդ վերածնունդը շատ բեղմնավոր էր, չափազանց հուժկու և մինչև այն աստիճան, որ կարողացավ խոր ակոսներ փորել ամբողջ հայության ճակատագրի մեջ: Ինչպես ռուս վտարանդիների օրգաններն էին հեռվից ազդում, դաստիարակում հասարակական միտքը հակացարական ուղղությամբ, ճիշտ այդպիսի առաքելություն էր ստանձնել «Հնչակը» առավելապես Արևմտյան Հայաստանի ուղղությամբ: Լեոն համեմատելով Գերցենի «Կոլոկոլ» և «Հնչակ» պարբերականները, եզրակացնում է, որ «Հնչակը» Գերցենի պարբերականի կրկնօրինակը կարծես լինի:

---

[3] Ս. Մարկոսյան, Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Ե. Հայաստան, 1968, էջ 270

[4] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Շաղիկ, 1994 հ. 1, էջ 147

Ավելին, «Երիտասարդություն» հոդվածում «Հնչակը» մեջ է բերում Գերցենի խոսքերը. «Ով հիմա գործ չգտնի, ով չճանաչի ճշմարիտ գործը, նա ոչ ոքի վրա չգանգատվի, նա ինքն արդարև դատարկ մարդ է, ծույլ է, պոռոտախոս է»[5]:

19-րդ դարավերջի հայ ազգային-քաղաքական կյանքի հարցերն ամենալայն հետազոտման նյութ էին դառնում նաև «Հնչակ»-ի էջերում: Հայ մտավորականության առաջնակարգ մտահոգությունը արևմտահայության ազգային-ազատագրության խնդիրն էր: Կարևորն այն էր, որ մամուլի օրգանները բացի արևմտահայության վիճակի, հայոց ողբերգակաև իրականության քննությունը, անաչառորեն վեր էին հանում մեր պատմության գորդյան հանգույցները, քննելով «Հայկական հարցի» պատմությունը, օբյեկտիվորեն գնահատում էին տվյալ պահի քաղաքական կացությունը, դրանք ծառայեցնում էին հայ ժողովրդի ազգային-քաղաքական նպատակադրումներին, առաջարկելով որոշակի ծրագիր, ցույց տալով ազատագրության հնարավոր ուղիները: Թերքը հաճախ էր անդրադառնում արևմտահայության ոչ հեռավոր անցյալին, հիշեցնելով այն դժնդակ պայմանները, որում ապրում էր գյուղացիությունը, այն անվանելով ստրկական կացություն: Ինչպես իրավացիորեն նշում է Յու. Ավետիսյանը՝ «Թուրքական սահմանադրություններով (1839, 1856, 1876) առատորեն շնորհված կյանքի, գույքի, ինչքի, ապահովության, հավասարության ու ազատության խոստումները բառացիորեն մնում էին թղթի վրա»:[6]

«Հնչակը» ընթերցողներին էր առաքվում բացարձակապես անվճար, որն էլ հնարավորություն էր տալիս նրա շուրջը համախմբել երիտասարդությանը, քննարկել Արևմտահայաստանի շուրջ ստեղծված քաղաքական ու տնտեսական պայմանները, ի մի հավաքել հայության ցաքուցրիվ ուժերը և այն ուղղել դեպի հայության նվիրական նպատակը: «Հայ ազգին որևէ խավը զերծ չէր «Հնչակի» բարերար ազդեցությունեն, որովհետև հնչակյան անունը նվիրական հմայքով մը ողողած էր մեր բովանդակ միջավայրը: Հայ մտավորականը Արփիարյաններէ, Բալասանյաններէ, Չոպանյաններէ սկսյալ մինչև ետին ուսանողը հնչակյան գաղափարներից կստանային իրենց հոգիին սնունդը: Հայ մշակը, գործավորը, արհեստավորը հնչակյան իդեալներուն իրականացման մեջ միայն կտեսնեին իրենց երջանկությունը, իրեց կյանքին բարօրությունը»:[7]

Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդրում «Հնչակը» առավել արմատական դիրք բռնեց: Թերքը մերժեց արևմտաեվրոպական դիվանագիտության օգնությունը և միայն հայ ժողովրդի կողմից սեփական ուժերի վրա

---

[5] «Հնչակ», 1888, հ. 4-5
[6] «Անահիտ» հանդես, էջ 64:
[7] Հ. Արամյան, Վերածնունդի երկունքը, Պոլիս, 1918, էջ 12:

հիմնվելու տեսակետն առաջարկեց: «Ընդհանրապես, - գրում է Զոն Կիրակոսյանը, - հնչակի շուրջ համախմբված հայ ուսանող երիտասարդները ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի առավել բարձր մակարդակն էին ներկայացնում»:[8]

«Հնչակի» նպատակը Տաճկահայաստանի ազատագրությունն էր, սակայն ի պատիվ թերթի, պետք է ասել, որ որևէ անգամ աշխատակիցները թուրք ժողովուրդը չչփոթեցին թուրք կառավարության հետ: Այսինքն, «Թուրքիան թուրքերին» շովինիստական գաղափարին հնչակյանները հակադրում էին «Հայաստանը բոլոր հայաստանցիներին» լոզունգը, որով պետք է գոյություն չունենային տիրապետող տարրեր, նախամեծար ու ստորադաս ժողովուրդներ, այսինքն «Հնչակի» նոր Հայաստանը պիտի ապրեր առանց կրոնի, ցեղի, սեռի և դասակարգերի խտրության: Նրանց նպատակն էր միապետական կարգերը վերածել ռամկավարական-սահմանադրականի և նոր կարգեր ստեղծել ժողովրդական սկզբունքով, այսինքն ժողովրդի արտադրող դասակարգին հնարավորություն տալ միջամտելու քաղաքական բոլոր գործերին, վերացնել բոլոր խոչնդոտները, որոնք արգելակում էին նրանց տնտեսական զարգացմանը և կուլտուրական առաջադիմությանը:

Հայ ժողովրդի փրկության միակ միջոցը «Հնչակը» համարում է հեղափոխությունը, որը պետք է սկսի գործադրել գիտակցական երիտասարդության հեղափոխական տարրը և միայն հաջողությունների շնորհիվ վայելի ժողովրդի աջակցությունը: Բայց թերթը նաև թերահավատ է, երբ գրում է հեղափոխական ուժերի կարողությունների մասին: Թերթը չի թաքցնում, որ հայերին պատած անմխիթար կյանքում դեռ չեն հանդիպում անկեղծ ու գիտակցականորեն մեծաթիվ մարտնչողների, որոնք գաղափարի հաղթական գործը դարձրած լինեն իրենց կյանքի գլխավոր նպատակը:

Եվ որն է ելքը հարցադրմանը, «Հնչակը» պատասխանում է, թե մի պատերազմ Թուրքիայի և Ռուսաստանի միջև հայերիս համար պետք է լինի ամենահարմար բոպեն դրդելու և բարձրացնելու հայ ժողովրդին թշնամիների դեմ, ձգտելով օգտվել այդ բոպեից ձեռք բերելու համար հայրենիքի ազատությունը: Եվ ամենահետաքրքրականը, ըստ «Հնչակի», այդ գործողությունները պետք է ուղղված լինեն թե ընդդեմ Ռուսաստանի և թե ընդդեմ Թուրքիայի: Այսինքն, հնչակյանները չեն ձգտել մի բռնապետությունից ազատվելու, որպեսզի նետվեն մի ուրիշ բռնապետության գիրկը: Ուրեմն նրանք նաև

---

[8] Զ. Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, 19-րդ դարի 80-ական թվականներ, Եր. 1980, էջ 304:

Ռուսաստանին չէին ապավինում: «Հնչակի» կարծիքով «Մեր ժողովրդի համար ատելի են ինչպես թուրքաց սուլթանն ու կառավարությունը, այնպես էլ ռուսականը: Մեզ միապես ատելի են թագավորներն ու բռնապետական կառավարությունները, միշտ և ամեն տեղ, լինեն օտարի կամ թե նույնիսկ մեր՝ հայերի»:[9] Թերթն ավելացնում էր. «Միթե՞ կարծում եք, որ մենք ձգտում ենք Թուրքիայից զատվել հենց պարզապես նրա համար, որ թուրքերը թուրքեր են, իսկ Թուրքիան էլ թուրքերինը, իսկ մենք հայեր ենք և ուզում ենք Հայաստանն էլ մեր լինի: Միթե՞ կարծում եք, որ մենք կուրացած ենք թե-ազգասիրությամբ, նեղահայաց նացիոնալիզմով: Եվ ինչ տգետ երազ, թուրք սուլթանից ազատվել, մի նոր հայ սուլթան մեր գլխին կանգնեցնելու համար»:[10] Եվ շատ հետաքրքրական է թերթի «վախը», երբ նույն թվականի համար 4-ում գրում էր, թե վախ կա, որ օսմանյան ճիրաններից փրկվելու դեպքում Հայաստանը որպես զոհ չընկնի արևմտյան եվրոպական շահագործող տերություններից մեկի ձեռքը, որը նրա հետ վարվի նույնչափ վայրենաբարո, որչափ Անգլիան Հնդկաստանի հետ:

Սլավոնական երկրների հակաթուրքական պրոպագանդան չէր կարող ազդեցություն չգործել հայ հասարակական մտքի վրա: Հայերը բարի նախանձով էին նայում արդեն անկախություն ստացած Բուլղարիայի ազգային վերելքին, տեսնում էին Ռումինիայի զարգացումը, Հունաստանի, Սերբիայի առաջընթացը: Այս կապակցությամբ Համբ. Երեմյանն իր «Հուշարձան Վան-Վասպուրականի» գրքում գրում էր. «1880-ական թվականները հայության աչքին առջև բացած էր նոր հորիզոն մը: Բալկանյան երկրներու ազատագրությունը նոր դաս մը էր բոլոր ազատատենչ հայերու համար»:[11]

«Հնչակն» քննադատության է ենթարկում Պոլսի հայ երևելիներին, որոնց ընչաքաղցությունը համարում է սարսափելի, նկատում, որ հայոց բոլոր առաջնորդներն անխտիր «ստրկական հնազանդությամբ ստորացնում են իրենց անձը, իրենց վախկոտությամբ, իրենց տգիտությամբ, ստորացնում են ազգի պատիվը և թշնամու ավար դարձնում հայերի կյանքն ու ողջ էությունը»:[12]

Թուրքական տիրապետությունից ազատագրվելու հարցում հնչակյանները դեմ չէին հեղափոխական այլ կազմակերպությունների հետ դաշինք կնքելուն: Եվ այս առումով նշանակալից էր «Հնչակի» 1891-ի դեկտեմբերի 23-ի մի հայտարարությունը, թե կուսակցությունը պաշտոնապես միացել է «Արևելյան դաշնակցությանը», որը համախմբում էր Մակեդոնիայի, Ալբանիայի,

---

[9] «Հնչակ», 1888, հ. 6:
[10] Նույն տեղում, 1889թ., հ, 1
[11] Հ. Երեմյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. 1, Ալեքսանդրիա, 1929, էջ 4:
[12] «Հնչակ» 1888, հ. 4-5:

Կրետեի հույն հեղափոխական կազմակերպություններին[13], որի նախագահն է նշանավոր հույն հեղափոխական Դիմիտրի Բոցարիսը, որը հուլիս 15-ին Աթենքի ցույցն էր ղեկավարում՝ նշելով Գում-Գափուի նշանավոր ցույցի տարեդարձը: Դաշնակցության նպատակն էր աջակցել բռնապետական լծի տակ հեծող արևելքի բոլոր ժողովուրդների ազատության գործին: «Հնչակի» գործիչները չէին մոռացել նաև կապեր հաստատել նոր կոզմավորվող ՀՅԴ-ի հետ: Միքայել Վարդանյանն անդրադառնալով այս հարաբերություններին, հիշում է, որ Կովկասում գտնվող հնչակյան կուսակցության այուներից մեկը Ռուբեն Խանազատը, որը բուռն պրոպագանդ էր մղում Կովկասի հայության մեջ, ձգտելով ընկերավարական դարձնել երիտասարդությանը և գրավել նրանց «Հնչակի» կողմը, դաշնակցության ղեկավարներից Արշակ Տեր-Գրիգորյանը նրան հանդիպում է Բաթումում, ապա նրանք միասին Թիֆլիս ժամանելով հանդիպում են Քր. Միքայելյանի և Զավարյանի հետ: Խանազատը պնդում է, թե նոր կազմավորվող կուսակցությունն անվերապահորեն պետք է ընդունի սոցիալիստական ծրագիր: «Սա, իհարկե, - գրում է Վարանդյանը, - անհամակրելի հարցում էր ժնևի կենտրոնի կողմից, որը սակայն դաշնակցականների համոզմամբ (չնայած նրանք ևս սոցիալիզմի կողմնակից էին), բայց դա հաւմարում էին ապագայի խնդիր, որովհետև սրությամբ այդ հարցը դնելու դեպքում, ըստ դաշնակ ղեկավարների վիժվելու էր ծրագիրը և միության գաղափարը»[14] և հետագայում Խանազարն ինքն էլ համոզված գրում էր, թե՝ Տրապիզոնում ու Պոլսում ունեցածս գործունեությունը ինձ ցույց էր տվել, որ մարքսիստական գործունեության համար այդ երկրում ոչ մի հող չկար, Թուրքիայի միջավայրում մարքսիստն անելիք չուներ:[15]

Տարաձայնություններ առաջացան նաև հնչակյան կուսակցության ներսում, երբ 1890-ականների կոտորածներից հետո կուսակցությունը ճգնաժամ էր ապրում: Բանն այն է, որ հնչակյան կուսակցության արևմտահայ գործիչները՝ Միհրան Տամատյան, Ապահ Պետրոսյանը (Ավետիս Գնզմյան), Լևոն Սկրտչյանը, Արփիար Արփիարյանը գտնում էին, որ արևելահայ հնչակյան գործիչները լավատեղյակ չեն արևմտահայերի իրական դրությանը և դեռ լավ չնախապատրաստվելով ինքնապաշտպանության, հապճեպ կատարված զինված ելույթներով ավելի էին կատաղեցնում թուրքերին: Իսկ ամենալուրջ տարաձայնությունը ծրագրի մեջ ամրագրված սոցիալիզմի հարցին էր վերաբերվում: Բանն այն է, որ Նազարբեկյան ամուսինները և արևելահայ մյուս գործիչները

---

[13] Նույն տեղում, 1891, հ. 16:
[14] Տ. Վարանդյան, ՀՅԴ պատմություն, Եր. 1992, էջ 57
[15] «Հայրենիք» հանդես, 1927, դեկտեմբեր:

իրենց կուսակցության հեռավոր նպատակն էին համարում սոցիալիզմը: Նրանք կարդացել էին Մարքսի, Էնգելսի գրքերը, Նազարբեկյանը մոտիկից ծանոթ էր Լենինին, սակայն արևմտահայ հնչակյանները սոցիալիզմի գաղափարը ուտոպիա էին համարում հայ իրականության համար, որտեղ դեռ տիրապետողը ֆեոդալական կարգերն էին: Ավելին, Արփիարյանը և մյուսները դեմ էին, որ արևմտահայության ազատագրության գործի համար հանգանակված դրամը ծախսվեր սոցիալիզմ քարոզելու համար: Ավ. Նազարբեկյանը հետամնաց երկրում սոցիալիզմի կառուցումը համարում էր ռեալ, մատնանշելով Մարքսի մի միտքը, թե չի բացառվում, որ տնտեսապես թույլ զարգացած մի երկրում էլ հաղթանակի սոցիալիզմը:

Թերթն անհաշտ պայքար է մղել եկեղեցականների դեմ, լիներ դա հայոց կաթողիկոսը, թե պատրիարքը: Օրինակ, «Նամակ Թիֆլիսից» թղթակցության մեջ դժգոհ թղթակիցը անդրադառնում է Մակարի «չար» գործերին, չմոռանալով հիշատակել Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու թալանը: «Հայոց կյանքը» հոդվածում նորից անդրադարձ է Մակար կաթողիկոսի գործունեությանը որպես անտարբերության տիպարի, երբ ռուսական իշխանությունները իր քթի տակ ընդհարումներ են ստեղծում պարսիկների և հայերի միջև, երբ ռուսացած հայերն ինտրիգներ են լարում իրենց ազգակիցների դեմ, երբ բազմաթիվ հայեր վտարանդի են դառնում ու աքսորվում Երևանից, իսկ Մակարը միշտ լուռ է:[16] «Մեր թշնամիները» առաջնորդողում պատրիարք Աշգյանը համարվում է դավաճան, որովհետև հուլիսի 15-ին Գում-Գափուի դեպքերից հետո նա հրաժարական էր տվել, իսկ օրեր անց քննադատելով հեղափոխականներին, նորից վերադառնում է իր աթոռին: «Նրա նետած կեղտոտ ձեռնոցը մենք բարձրացնում ենք գետնից, նրա դեմքին իսկ հարվածելու համար»[17]:

«Կաթողիկոսական խնդիրը և հայ հասարակությունը»[18] հոդվածում նրանք գուշակում են, թե ում են ընտրելու հայերը, ինչ դիրք են բռնելու ռուս և տաճիկ կառավարությունները, ինչ ազդեցություն նրանք կունենան ընտրությունների վրա, ահա հարցեր, որ հետաքրքրում են աշխարհի ողջ հայությանը: «Պետք է գիտնալ, - գրում է թերթը, - որ քանի դեռ քաղաքական կերպերը Ռուսաստանում կլինեն միապետական, քանի որ ռուսահայերը զուրկ կլինեն քաղաքական ազատություններից և քանի որ ռուսաց բռնապետական կառավարության շահերը կթելադրեն նրան ավելի ու ավելի ճնշել ռուսահայերին, կաթողիկոս ընտրելը հայերի կողմից կա ու կմնա լոկ մի հեգնական ձևակա-

---

[16] «Հնչակ», 1888, հ. 7:
[17] Նույն տեղում, 1891, հ.2:
[18] Նույն տեղում, 1892, հ. 3:

նություն և այն ամբողջ աղմուկը, որ տեղի է ունենում դրա շուրջը, միայն ժամանակի կորուստ է: Դրդված իր բռնակալ քաղաքականությամբ, ռուսաց կառավարությունը միշտ կրնա իր ազդեցությունը գործադրել կաթողիկոսի ընտրության վրա և իր քաղաքականությանը հարմար մեկ անձն բազմած տեսնել կաթողիկոսական աթոռի վրա: Ապացույց Մակարի ընտրությունը, որ դեռ ամենքը հիշում են»: Եվ զավեշտով թերթը շարունակում է, թե ընտրությունից անմիջապես հետո ռուսաց կառավարությունը նորընտիր կաթողիկոսին է ներկայացնելու մի նոր կանոնադրություն, որին պետք է ենթարկվեն ռուսահայերը՝ Ռուսաստանի հայոց դպրոցներում դասավանդությունը պետք է կատարվի ռուսաց լեզվով, բացի կրոնից: Հայոց լեզուն պետք է դասավանդվի որպես օտար լեզու:

Ամսաթերթը տեղ է հատկացրել նաև գրականության հարցերին: Նա Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը համարում է մեծ արժեք այն իմաստով, որ այն գրված է ժողովրդական բարբառով, ջերմ սիրով դեպի հայ ժողովուրդը, որի «հարուցած կամ առաջացրած հասարակական հարցերը ամենահարաչքն են ընդհանուր հայության համար և մինչև օրս էլ չեն դադարում նույնը լինել»:[19] Թերթը հեղաբեկիչ է համարում Նազարյանցի և Նալբանդյանի դերը հայ հասարակական-քաղաքական կյանքում, հայտարարելով, թե նրանց գործի իսկական շարունակողը դարձավ Ռաֆֆին, որի մահվան լուրը ցնցել էր խմբագրության աշխատակիցներին: Ռաֆֆուն նրանք անվանում են «վաթսունամյա պտղատու ընկուզենի», որ հայ գրականության մեջ կարմիր ժապավենով ծգվող նրա աշխատությունները հայության համար բացում են նոր ճանապարհ դեպի առաջադիմություն և ազատություն: «Նա արտահայտիչն է այն ձգտումների, որոնք Նալբանդյանի քնարի լարերն են դողացրել, որոնք Պատկանյանի քարոզչական բանաստեղծություններն են արտադրել»[20]:

Ըստ Ալ. Մյասնիկյանի «հնչակյաններն ուժեղ էին մինչև 1907թ., երբ որպես ազգային նացիոնալիստական կուսակցություն նրանք տեղի տվեցին Դաշնակցությանը: Իսկ մինչ 1907թ. նրանք եղել են ազգային ազատագրական շարժման ղեկավարներ, սակայն չունենալով որոշ տվյալներ՝ դառնալու իսկական նացիոնալիստական, մարտական կազմակերպություն, նրանք ընկել են Դաշնակցության հարվածների տակ և մնացել կրավորական դերում»[21]: Ըստ Մյասնիկյանի, հնչակյանը նույն դաշնակցականն է, սակայն ավելի

---

[19] Նույն տեղում, 1888, հ. 6:
[20] «Հնչակ», 1888, հ. 6
[21] Ալ. Մյասնիկյան, Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 101-102

պարուրված սոցիալիստական շղարշով, իսկ սոցիալիստական սաղմեր հայերն ունեցել են «Հնչակից» շատ առաջ, դեռևս Նալբանդյանի գործերում:

Հնչակյանների կովկասյան կոմիտեն բանվորների շրջանում իր ակտիվ գործունեությունը ծավալել սկսեց 1904թ. դեկտեմբերից, երբ Բաքվում մեծ ցույց տեղի ունեցավ ռուս սոցիալ-դեմոկրատների հետ համատեղ: Հնչակյան կուսակցության և ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների միջև ամուր կապ կար, նաև որոշում, որ այս երկկուսակցությունները միավորվեն: Այս առիթով Ավ. Նազարբեկյանը բանակցություններ է վարել Գ. Պլեխանովի, Վ. Լենինի, Լ. Մարտովի հետ և կար կատարյալ համաձայնություն կողմերի միջև, սակայն մի կետում նրանք տարաձայնություններ ունեցան: Խոսքը Արևմտահայաստանի մասին էր: Լենինն առաջարկում էր անջատել Թուրքահայաստանը Արևելյան Հայաստանից և որպես կովկասյան կուսակցություն ձուլվել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության կովկասյան շրջանային կազմակերպության մեջ, որի ղեկավարներն էին Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Բ. Կնունյանցը: «Հնչակը» մերժեց այս առաջարկը:

Երիտթուրքերի նկատմամբ էլ «Հնչակը» հավատ չէր ընծայում, որն էլ պատճառ դարձավ, որ նախ արգելվի թերթի մուտքը Թուրքիա, ապա նաև մեծ հաշվեհարդարը հնչակյան նշանավոր գործիչների նկատմամբ: